<<ԶԻԷՆՍԻ-ԱԼՖԱ>> ՓԲԸ ընկերությունը (Ռոստելեկոմ Արմենիա) փնտրում է թեկնածուներ Մանրածախ վաճառքի մասնագետի թափուր հաստիքի համալրման համար:

Պաշտոնը՝ Մանրածախ վաճառքի մասնագետ

Աշխատանքի վայրը՝ ք. Իջևան

Աշխատանքային ժամեր՝ 09:00-18:00

Աշխատանքային գործառույթներ՝

• Ընկերության մասսայական սեգմենտի ծառայությունների վաճառքի գործընթացների իրականացում՝ հաստատված կարգի համաձայն,
• Կատարված գործարքների մասին հաշվետվությունների ներկայացում,
• Ընկերության կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումների գանձման գործընթացի իրականացում՝ ընկերության կողմից ներդրված ընթացակարգերի պահանջների համաձայն,
• Մասնակցություն վաճառքի խթանմանն ուղղված միջոցառումների իրականացմանը,
• Մասնակցություն նոր հաճախորդների ձեռքբերմանն ու գոյություն ունեցող հաճախորդների պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացմանը,
• Հաճախորդներին Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների, ծառայությունների գնացուցակների, վաճառքի կետերի մասին լիարժեք և ամբողջական տեղեկատվության տրամադրում,
• Ծառայությունների կասեցման, ժամանակավոր դադարեցման, Ընկերության կողմից տրամադրված սարքավորումների վերադարձման գործընթացների իրականացում,
• Ընկերության բաժանորդների հետ սահմանված կարգով պայմանագրերի ստորագրման և պահպանման, փաստաթղթերի արխիվացման գործընթացների իրականացում,
• Հաճախորդների տվյալների բազայի ձևավորում և անընդհատ համալրման աշխատանքների իրականացում,
• Բովանդակությամբ կից պարտականությունների իրականացում:

Պահանջներ՝

Կրթություն՝ բարձրագույն

Համակարգչային ծրագրերի իմացություն՝ MS OFFICE

Լեզուների իմացություն՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն (ցանկալի)

Աշխատանքային փորձի առկայությունը պարտադիր պայման չէ:

Խնդրում ենք ռեզյումեներն ուղարկել hr@rtarmenia.am էլ. փոստի հասցեին՝ նշելով համապատասխան հաստիքի անվանումը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետը՝ 29.01.2016: